[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
14	Հունիս	2018 թ.		Ա	6473254906
[4] Մատակարարման ամսաթիվ					
14	Հունիս	2018 թ.			

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ			N 11500166513800						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կոդյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակությունը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	48172617 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

14/06/2018 11:37:15

72

ՈՐՈՇՈՒՄ
ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԴԱՏԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«20» հոկտեմբերի 2017թ. ք.Արմավիր

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Ս.Պողոսյանս վերանայելով վարույթումս քննվող թիվ 48172617 քրեական գործի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

09.10.2017թ.-ին Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղի բնակչուհի 13.09.2001թ.-ին ծնված Հրանուշ Արմենի Մանուկյանը ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնում հաղորդում, ապա նաև բացատրություն է տվել այն մասին, որ 07.10.2017թ.-ին՝ ժամը 18-ի սահմաններում, Բամբակաշատ գյուղի եկեղեցու հետնամասում գտնվող կիսաքանդ շինությունում Երևան քաղաքի բնակիչ 2002թ. ծնված Գոռ Մարտիկի Սարիբեկյանը հակի պարանով կապել է իր ձեռքերը մեջքի հետևում, ձեռքերով հարվածներ է հասցրել իր մարմնի տարբեր մասերին և իր կամքին հակառակ սեռական հարաբերություն է ունեցել հետնցքից, ապա նաև հեշտոցից:

Դեպքի առթիվ 2017թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 48172617 քրեական գործը: Նույն օրը որոշում է կայացվել քրեական գործն ըստ ենթակայության ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչություն ուղարկելու մասին: 12.10.2017թ.-ին թիվ 48172617 քրեական գործով նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

12.10.2017թ.-ին Հրանուշ Մանուկյանը ճանաչվել է տուժող:

18.10.2017թ.-ին անչափահաս Գոռ Մարտիկի Սարիբեկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործություններ կատարելու կասկածանքով որպես խափանման միջոց է ընտրվել ծնողին հսկողության հանձնելը: Գոռ Սարիբեկյանը հանձնվել է իր հոր՝ Մարտիկ Հակոբի Սարիբեկյանի հսկողությանը:

Դեռևս նյութերի նախապատրաստման ընթացքում Գոռ Սարիբեկյանը բացատրություն է տվել այն մասին, որ սովորում է ֆինանսատնտեսագիտական քոլեջում որպես խոհարար: Բամբակաշատ գյուղի բնակչուհի Հրանուշ Մանուկյանին ճանաչում է գյուղի միջնակարգ դպրոցից, քանի որ ինքն էլ է ժամանակին այդ դպրոցը հաճախել: Հրանուշը իրենից մեկ տարով մեծ է: Շուրջ 2 շաբաթ առաջ համացանցի <<Ֆեյսբուք>> կայքի միջոցով ընկերության առաջարկ է ուղարկել Հրանուշին, իսկ նա ընդունել է առաջարկը ու սկսել են շփվել: <<Ֆեյսբուք>>-ով 4 օր շփվելուց հետո Հրանուշից խնդրել է հեռախոսահամարը ու նա հայտնել է: Ներկայումս չի հիշում, թե Հրանուշը ինչ հեռախոսահամար էր օգտագործում: Դրանից հետո իրենք ավելի հաճախ են սկսել շփվել հեռախոսազանգերի ու SMS հաղորդագրությունների միջոցով: Շփվելու ընթացքում իրենց մոտ ցանկություն է առաջացել հանդիպելու: Ինքը առաջին անգամ Հրանուշին հանդիպել է 2017թ. հոկտեմբերի 7-ին՝ ժամը 18-ի սահմաններում, Բամբակաշատ գյուղի եկեղեցու տարածքում: Շուրջ կես ժամ զրուցելուց հետո բաժանվել են իրարից, ինքը գնացել է Բամբակաշատ գյուղի իրենց տուն, իսկ թե Հրանուշը ուր է գնացել՝ չգիտի: Այդ հանդիպման ժամանակ իրենց միջև որևէ վիճաբանություն, դեպք տեղի չի ունեցել,

իրարից նորմալ ձևով բաժանվել են: Եկեղեցու տարածքից Հրանուշի հետ որևէ այլ տեղ չի գնացել, նրա հետ սեռական հարաբերություն չի ունեցել, նրան չի բռնաբարել, չի ծեծել ու չի սպառնացել, Հրանուշը հորինել է այդ ամենը: Այդ օրը իր հագին եղել է կանաչ կապիշոնով բաճկոն, սև գույնի երկարաթև շապիկ, մոխրագույն՝ սպիտակ երանգներով սպորտային տաբատ և մոխրագույն վարտիք: Վարտիքը և տաբատը նույն օրը երեկոյան գցել է լվացքի մեքենայի մեջ, քանի որ ամեն օր դրանք փոխում է: Նախկինում, երբ դեռ 1 շաբաթ էին հեռախոսով ու ինտերնետով շփվել, Հրանուշն իրեն առաջարկել էր հանդիպել եկեղեցու մոտակայքում, սակայն քանի որ ինքը դասի է եղել, մերժել է նրան՝ ասելով, որ հարմար չի:

Տուժող Հ.Մանուկյանը ցուցմունք է տվել այն մասին, որ բնակվում է Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղ 20 փողոցի թիվ 6 տնակում՝ ընտանիքի հետ: Սովորում է գյուղի միջնակարգ դպրոցում: Իրենց դպրոցում 2 տարի առաջ սովորել է համագյուղացի Գոռ Մարտիկի Սարիբեկյանը, ով այժմ բնակվում է Երևան քաղաքում: 2017թ. օգոստոս ամսին՝ խաղողօրհնեքի օրը, Գոռ Սարիբեկյանը ինտերնետի <<Ֆեյսբուք>> կայքով գրել է իր անձնական էջին, առաջարկել է շփվել, ինքն էլ համաձայնվել է: Իրենք սկսել են շփվել ինտերնետով, մի քանի օրից՝ նաև հեռախոսով, ինչպես զանգելով, այնպես էլ՝ SMS գրելով: Գոռն ամեն ուրբաթ երեկոյան գալիս է գյուղ, հանգստյան օրերին մնում այնտեղ՝ հոր մոտ: Նրա ծնողներն ամուսնալուծված են: Գոռի հետ գյուղում հանդիպել է երկու անգամ, երկրորդ անգամը հենց դեպքի օրն է եղել, իսկ առաջին անգամը՝ օգոստոսի վերջերինն: Դեպքը տեղի է ունեցել 2017թ. հոկտեմբերի 7-ին: Գոռը այդ օրն է եկել գյուղ՝ ժամը 17-ի սահմաններում: Գոռը սկսել է իրեն գրել ու զանգել: Քանի որ այդ ժամանակ՝ ժամը 17:30-ի սահմաններում, ինքը գտնվել է տանը, ծնողները կողքին են եղել, չի կարողացել պատասխանել Գոռին, ինչից նա բարկացել է իր վրա: Այդ ժամանակ մայրն իրեն ասել է, որ գնա տատի տուն ու այնտեղից բերի քեռու մանկահասակ որդուն: Ինքը որոշել է, որ մինչև տատի տուն գնալը, կգնա ու կհանդիպի Գոռին: Վերջինս նաև իրեն SMS է գրեց՝ նշելով <<եթե 5 րոպեից եկեղեցու հայաթը չեղար, վերջդ վատա լինելու>>: Երբ ինքը ճանապարհին է եղել, Գոռը զանգել է, ասել, որ գնա եկեղեցու մերձակայքում գտնվող կիսաքանդ շինության մոտ: Գնացել է շինության մոտ և երկուսով մտել են դրա առաջին հարկ, շուրջ 10 րոպե խոսել են: Դրանից հետո Գոռը գրկել է իրեն և ցանկացել համբուրել, բայց ինքը չի թողել, ասել է, որ չի ուզում համբուրվել հետը: Նա մի քանի անգամ փորձել է համբուրել և երբ ինքը չի թողել, բարկացել է, գետնից թել վերցրել ու իր ձեռքերը հանկարծակի ոլորել մեջքի հետևը և այդ թելով կապել իրար: Ինքը փորձել է դիմադրել, ոտքով հարվածել Գոռին: Այդ ժամանակ մեջքով է կանգնած եղել դեպի Գոռը, բայց նա ոտքերով բռնել է իր ոտքը և կապել ձեռքերը: Ինքը գոռալով օգնություն է կանչել ու Գոռից պահանջել, որ իրեն բաց թողնի և ձեռքերը չկապի: Ընթացքում Գ.Սարիբեկյանը նաև ձեռքով փակել է բերանը, իջեցրել իր ջինսե տաբատը, իջացրել է նաև վարտիքը: Դրանից հետո Գ.Սարիբեկյանը իջեցրել է հագին եղած սպորտային տաբատը և վարտիքը, իրեն հրել է պատուհանի կողմը, այդ ժամանակ ինքը դեմքով դեպքի Գոռի կողմն է եղել, մեջքը դիպել է պատուհանի գոգին, ուժեղ ցավացել: Նա մոտեցել է իրեն, բռնել կոկորդից հեշտոցից իր կամքին հակառակ սեռական հարաբերություն է ունեցել հետը, սեռական օրգանը մտցրել է իր հեշտոցի մեջ: Դրանից հետո իրեն շրջել է մեջքով դեպի նա, հրել է ու ինքը, ոտքերը գետնին, կրծքավանդակի հատվածով ընկել է պատուհանագոգի վրա և երբ փորձել է գոռալ, Գ.Սարիբեկյանը ձեռքով փակել է բերանը: Այդ ժամանակ նա արդեն հետը սեռական հարաբերություն է ունեցել հետանցքից, սեռական օրգանը մտել է իր հետանցքի մեջ ու Գոռը այդ դիրքով սեռական հարաբերություն է ունեցել իր կամքին հակառակ: Չի հիշում, թե սկզբում Գոռը իր հետ սեռական հարաբերություն է ունեցել հեշտոցից, թե հետանցքից: Դրանից հետո Գ.Սարիբեկյանը քաշել է իր մազերից և գցել գետնին, ինքը ծնկաչոք դիրքում է հայտնվել ու Գոռը փորձել է բերանը բացել և իր անդամը մտցնել բերանը, բայց չի կարողացել

բացել բերանը: Նա անդամը մոտիկ է բերել, դիպցրել դեմքին, փորձել է մտցնել բերանը, բայց չի կարողացել բացել բերանը: Ընթացքում Գ.Սարիբեկյանը նաև սկսել է հարվածել իրեն, բաց ափով ապտակել է, նույն բաց ափով հարվածներ է հասցրել նաև գլխին: Այնուհետև, Գոռը մազերից քաշել և կանգնացրել է ոտքի, ինքը փորձել է գոռալ, իսկ Գոռն ասել է, որ հանգիստ մնա, թե չէ կսպանի: Դրանից հետո իրեն կրկին շրջել է մեջքով դեպի նա, ու հրել պատուհանագոգի կողմը և նույն ձևով իր կամքին հակառակ հետանցքից սեռական հարաբերություն ունեցել: Դրանից հետո Գոռը կտրել է իր ձեռքերի պարանը: Այդ ժամանակ ինքը փորձել է տաբատն ու վարտիքը քաշել վերև, բայց նա չի թողել, քաշքշել է, կրկին հրել այդ պատուհանագոգի մոտ: Ինքը դեմքով դեպի Գոռն է եղել ու նա իր կամքին հակառակ հեշտոցից կրկին սեռական հարաբերություն է ունեցել հետը: Այդ ժամանակ փորձել է ձեռերով հրել, հարվածել նրան, բայց չի կարողացել, Գ.Սարիբեկյանը բռնել է ձեռքերից, քաշել մազերը ու այդ ընթացքում շարունակել է սեռական հարաբերություն ունենալ հետը: Գոռը կրկին փորձել է համբուրել իրեն, սակայն ինքը չի թողել, շարունակել է հրել նրան և Գոռը բարկացած սկսել է հագնվել, այդ ժամանակ իքն էլ է տաբատը քաշել վերև: Դրանից հետո ինքը գնացել է տատի տուն: Այդ ամենի արդյունքում իր հագուստը չի վնասվել: Վախեցել է ծնողներին հայտնել Գոռի կատարածի մասին, քանի որ դեպքից հետո շատ վախեցած է եղել ու տուն գնալով պառկել է իր անկողնում: Դեպքի մասին առաջինը պատմել է տատին դրա հաջորդ օրը՝ առավոտյան: Հետագայում հետաքննիչին է ներկայացրել դեպքի ժամանակ իր հագին եղած հագուստը, այդ ժամանակ չի իմացել, որ մայրը իր շապիկի վրա՝ հետևի մասում, երկու տեղ սերմնահեղուկի հետք է նկատել: Դրա մասին հետագայում մայրն է հայտնել իրեն:

Ինքը նախկինում երբևէ որևէ մեկի հետ սեռական հարաբերություն չի ունեցել, ոչ էլ որևէ մեկը իր հետ սեքսուալ բնույթի գործողություններ է կատարել: Դեպքից առաջ Գոռ Սարիբեկյանը երբեք առաջարկած չի եղել սեռական հարաբերություն ունենալ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարել իրար հետ: Ինչքանով ինքը հասկացել է դեպքի ժամանակ Գոռը խմած չի եղել, վրայից ալկոհոլի հոտ չի եկել: Գ.Սարիբեկյանի հագին եղել է կանաչ գույնի կապիշոնով վերնազգեստ, մուգ գույնի երկարաթև շապիկ, մոխրագույն սպորտային տաբատ, իսկ վարտիքը ինքը չի տեսել:

Համաձայն 20.10.2017թ.-ին ստացված դատաբժշկական փորձաքննության թիվ 237 եզրակացության՝ Հրանուշ Արմենի Մանուկյանի ստացած մարմնական վնասվածքները՝ ձախ բազկի վերին երրորդականի դրսային մակերեսի և միջին երրորդականի առաջային մակերեսի մեկական արյունազեղումների ձևով, պատճառվել են բութ, կոշտ առարկայով կամ առարկաներով, հնարավոր է նշված ժամկետում, որոնք ինչպես միասին, այնպես էլ՝ առանձին-առանձին առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում: Հ.Մանուկյանի մոտ 16 տարեկան կուսաթաղանթի անատոմիական ամբողջականությունը խախտված չէ: Ելնելով կուսաթաղանթի անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունից՝ հնարավոր չէ սեռական հարաբերություն առանց կուսաթաղանթի անատոմիական ամբողջականության խախտման: <<Բռնություն>> հասկացությունը իրավաբանական է և դրա որոշելը չի մտնում դատաբժշկական փորձագետի իրավասության մեջ: Հ.Մանուկյանի մոտ փորձաքննության պահին հետանցքի շրջանում և հետանցքում մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել: Հ.Մանուկյանի հեշտոցամուտքից և հետանցքից պատրաստված քսուկներում և խծուծներում սերմնէակներ չեն հայտնաբերվել: Ինչպես վնասվածքների, այնպես էլ՝ սերմնէակների բացակայությունը դեռևս չեն բացառում հետանցքից սեռական հարաբերություն ունենալու հնարավորությունը: Հ.Մանուկյանի մարմնի վրա կենսաբանական ծագման օբյեկտներ՝ հետքեր որպես այդպիսիք փորձաքննության պահին չեն հայտնաբերվել, իսկ ինչ վերաբերվում է մատերի եղունգների տակի պարունակությանը, ապա այն վերցվում է քննիչի կողմից

համապատասխան փորձաքննություն նշանակելու համար: Հ.Մանուկյանի մոտ մասնագիտական կոնսուլտատիվ տվյալներով ախտորոշվել է <<սթրեսին սուր հակազդում, դեպրեսիվ էպիզոդ>>: Քանի որ հոգեբույժը առաջադրված հարցին լիարժեք չի պատասխանել, նրա կողմից չի որոշվել եղած հոգեվիճակի ուղղակի կապը 07.10.2017թ. տեղի ունեցած դեպքի հետ և ի նկատի ունենալով նրա ելքի ոչ պարզ լինելն, այն պարզելու համար անհրաժեշտ է լսել Լ.Պողոսյանին, այնուհետև անհրաժեշտության դեպքում նշանակել դատահոգեբուժական փորձաքննություն:

Ելնելով վերգրյալից և նկատի ունենալով, որ քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները տուժող Հրանուշ Արմենի Մանուկյանի կողմից ճիշտ ընկալելու ունակությունը, որևէ հոգեկան հիվանդությամբ կամ հոգեկան գործունեության խանգարմամբ տառապելու հանգամանքը, նրա հոգեկան լիարժեքության, մտավոր զարգացածության աստիճանը որոշելու և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության և հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ և 248-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ կից դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի փորձագետներին:

2. Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Անչափահաս տուժող Հրանուշ Արմենի Մանուկյանը որևէ հոգեկան հիվանդությամբ կամ հոգեկան գործունեության խանգարմամբ երբևէ տառապել է կամ այժմ տառապում է, թե ոչ:

բ/ 07.10.2017թ. դեպքի արդյունքում Հրանուշ Մանուկյանի մոտ որևէ հոգեկան հիվանդություն կամ հոգեկան գործունեության խանգարում առաջացել է, թե ոչ:

գ/Անչափահաս տուժող Հրանուշ Մանուկանը ունակ է արդյոք ճիշտ ընկալելու և ճիշտ վերարտադրելու քրեական գործի համար կարևոր հանգամանքները:

դ/Հրանուշ Մանուկյանի մոտ արդյոք առկա է հոգեկանի զարգացման հապաղում, որը կապված չէ որևէ հոգեկան հիվանդության հետ, եթե այո, ապա ինչպես է այն արտահայտվում:

ե/Փորձաքննվողին բնորոշ են այնպիսի անհատական-հոգեբանական առանձնահատկություններ /օրինակ՝ հոգեկան զարգացման հապաղում, որոնք կապված չեն որևէ հոգեկան հիվանդության հետ, անձնային, հուզակամային և այլն/, որոնք կարող էին էապես ազդել հետազոտվող իրավիճակում /07.10.2017թ. դեպք/ նրա վարքի վրա:

զ/Ինչպիսի անհատական-հոգեբանական առանձնահատկություններ ունի փորձաքննվողը:

է/Հաշվի առնելով տուժողի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, ինտելեկտուալ,անձնային զարգացման մակարդակը և հետազոտվող իրավիճակի բովանդակությունը, կարող էր արդյոք նա հասկանալ իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը:

ը/ Հաշվի առնելով փորձաքննվողի հոգեկան վիճակը՝ կարող էր արդյոք նա հետազոտվող իրավիճակում հասկանալ իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը:

թ/Հաշվի առնելով փորձաքննվողի տարիքային, անհատական հոգեբանական առանձնահատկությունները և հետազոտվող իրավիճակների բովանդակությունը՝ կարող էր արդյոք նա դիմադրություն ցույց տալ:

ժ/Հաշվի առնելով փորձաքննվողի հոգեկան վիճակը և հետազոտվող իրավիճակների բովանդակությունը՝ կարող էր արդյոք նա դիմադրություն ցույց տալ:

ի/ Փորձաքննվողի որ անհատական հոգեբանական առանձնահատկությունները կարող էին էապես ազդել տվյալ իրավիճակում նրա վարքի վրա:

լ/Հաշվի առնելով փորձաքննվողի հոգեկան զարգացման մակարդակը, անհատական հոգեբանական աձանձնահատկությունները և հոգեկան վիճակը՝ կարող էր նա ճիշտ ընկալել գործի համար կարևոր հանգամանքները և ճիշտ ցուցմունքներ տալ:

խ/Որոնք են տուժողի իմացական գործընթացների /ուշադրություն, հիշողություն և այլն/ անհատական առանձնահատկությունները:

ծ/Փորձաքննվողին բնորոշ են արդյոք բարձր ներշնչվողականության հատկանիշներ կամ վառ երևակայությունը:

կ/Տուժող Հրանուշ Մանուկյանը նկարագրվող իրավիճակում անօգնական վիճակում գտնվել է, թե՝ ոչ:

3. Փորձագետին/ներին/ խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, բայց կառաջանան փարձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փարձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Փորձաքննություն կատարելու համար փորձագետներին ներկայացնել տուժող Հրանուշ Մանուկյանին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև քրեական գործի նյութերը:

5.Հանձնարարել փորձագիտական հանձնաժողովի նախագահին՝ պարզաբանել փորձագետին/ներին/, որոնց հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, ՀՀ քր. դատ. օր.-ի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քր.օր.-ի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Միաժամանակ փորձագետներին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրվելիք քրեական գործի կամ նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակման դեպքում ՀՀ քր. օր. 315-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ **Ա.ՊՈՂՈՍՅԱՆ**